ԳՐԱԲԱՐԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԱԳԱԱՌԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ

Գ.Կ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարադրավոր բայերն ուսումնասիրության նյութ է դարձրել պրոֆ. Ալ.Մարգարյանն իր մենագրության մեջ՝, որտեղ հեղինակն արդի հայերենի հարադրավոր բայերին զուգահեռ արժեքավոր դիտարկումներ ունի նաև գրաբարի հարադրավոր բայերի բովանդակության և մասնավորապես արտահայտության պլանների մասին: Նշված աշխատության մեջ, սակայն, հեղինակը քննության չի ենթարկել հարադրավոր բայերի արժույթի հետ կապված հարցեր: Պատճառը, կարծում ենք, այն է, որ քերականական արժույթի գաղափարը մեզանում սկսել է արծարծվել մեր դարի 70-ականների կեսերից, երբ դիտական շրջանառության մեջ մտավ ակադ. Գ.Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (Ե., 1974) աշխատությունը, որտեղ հեղինակը, տալով արժույթի՝ որպես քերականական իրողության սեռմ, բայց ամբողջական բնութագիրը, արդի հայերենի բայերը դասակարգել է ըստ վերջիններիս արժութային առանձնահատկությունների:

Ներկա շարադրանքում քննության ենք առել գրաբարի չեզոք սեռի հարադրավոր բայերը՝ կարևորելով դրանց արժույթի դրսևորումներից երկուսը՝ խնդրառությունն ու պարագաառությունը:

Չեզոք սեռի հարադրավոր բայերի խնդրառությունը: Խնդրառական արժույթի տեսանկյունից չեզոք սեռի հարադրավոր բայերը աչքի են ընկնում անմիօրինակությամբ՝ բաժանվելով երկու խմբի՝

Ա. խնդրառությամբ արժութազուրկ չեզոք սեռի բայեր,

Բ. խնդրառությամբ չեզոք սեռի հարադրավոր բայեր:

Խնդրառու չեզոք սեռի բայերի՝ իրարից ունեցած տարբերությունն այն է, որ նրանց մի մասը խնդրառությամբ միարժույթ է, իսկ մյուս մասը՝ երկարժույթ: Հմմտ. խնդրառությամբ միարժույթ և երկարժույթ հետևյալ բայերը՝ Նմա մեկայն ոչաս տարցին (Աղաթ., 407):

Չեզոք սեռի՝ խնդրառությամբ արժութազուրկ հարադրավոր բարդություններ կազմությանը մասնակցում են ոչ միայն չեզոք սեռի բայեր, ինչպիսիք են՝ անկանիմ, անցանել, ընթանալ, դալ, գնալ, դիպիմ, ելանել, ընկալնում, իջանել, խազալ, կալ, հայիմ, հասանել, մտանել, յառնել, նստիմ, փախչիմ, այլ նաև մի շարք ներգործական սեռի բայեր, ինչպես՝ ածել, արկանել, արբել, բառնալ, զամանիմ, դնել, զգալ, թափել, ընուլ, խոցել, կալնուլ, կոտորել, վարել, վրիպել և այլն: Օրինակ՝ Ուր գողք ական հատանեն (Մատթ., Լ, 42)[1]: Սաւուղաբար արար ընդ անձին իւրում (Խոր., 301): Մի՛թէ ի կաքաւս իջանիցես, պար անցանիցես (ՆՀԲ): Ընդ կրունկն դարձաւ քաջն Տերենտիանոս (Խոր., 307):

Թեև չեզոք սեռի դարձվածքային հարադրավոր բայերը գրաբարի լեզվական աղբյուրներում մեծ թիվ են կազմում, սակայն նկատենք, որ հարադրի գործառույթով հանդես են գալիս հիմնականում գրաբարի ակտիվ բառապաշարի շերտ կազմող մի քանի գոյականներ և այլ բառեր: Դրանցից են՝ աթոռ, ակն, այր, անձն, սար, աչք, աշխարհ, բան, բերան, բուռն, գինի, գին, երեսք, թիւ, ժամ,

---

[1] Տե՛ս Ա.Ս. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ս., 1966:

[2] Ատվածաշնչյան այս և հետագա օրինակները քաղել ենք Վենետիկի 1861թ. հրատարակությունից՝ գիտական շրջանառության մեջ հայտնի համառոտագրություններով:

լեզու, կին, հոգի, ձեռն, միմեանս, միտք, ոգի, ոտն, սիրտ, քուն և այլն: Անշուշտ, դրանք տարբեր բարդությունների մեջ հանդես են գալիս քերականական տարբեր ձևերով՝ նպաստելով այս կամ այն բայիմաստի արտահայտմանը: Օրինակ՝ Զուրքն դարձան զանձամբք /«շրջվել», «շրջան կատարել»/ (ՆՀԲ): Սա ինքն անցեալ էր զաւուրքք բազմօք (Ղուկ., Ա, 18):

Խնդրառությամբ միարժույթ հարադրավոր բայերի բնության խնդիրը կարող է արտահայտվել՝

1. տրական հոլովով, որ պահանջում են այց առնել, յայց ելանել, անարգանս առնել//դնել, անդորր առնել, կաշառ խթել, կարեկից լինիմ, կենակից լինիմ, կեր լինիմ, տեղեակ լինիմ, ի փորձ մտանել, ընդ փորձ անցուցանել և այլ բայեր: Օրինակ՝ Իրազգաց եղեալ խորհրդոյ (Փարպ., 57): Պատսպարան լինիմ տկարաց (Ա Թեսաղ., Ե, 14) և այլն:

Որոշ հարադրավոր բայերի՝ տրականով արտահայտված բնության խնդիրը բացակայում է՝ տվյալ նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով: Օրինակ՝ Իսկ Տիրան, հարեալ սպասաւորութիւն, անցուցանէ զամբարիշտն Յուլիանոս ընդ Եփրատ (Խոր., 271):

Տրականից բացի՝ այս շարքի որոշ բայեր միաժամանակ պահանջում են նաև գործիական հոլովաձևով կամ կապական կապակցությամբ արտահայտված բնության խնդիր ևս, որը, սակայն, այդ բայերի համար պարտադիր և ուժեղ կառավարման արտահայտություն չէ: Օրինակ՝ Ահ ինչ արկանել ձեզ թղթովքս (Բ Կոր., Ժ, 9)[3]:

Տրականով բնության խնդիր պահանջող հարադրավոր բարդությունների բաղադրիչները բազմաթիվ դեպքերում իրարից տարանջատվում են նշված բնության խնդրով, երբեմն էլ՝ այլ անդամներով ևս, ինչպես՝ Եւ արարին նամակին պատասխանի (Եղիշէ, 27) և այլն:

Տրականով արտահայտված բնության խնդիրը շարադասությամբ կարող է լինել և՛ նախադաս, և՛ վերջադաս: Հմմտ. Նմա ընդառաջ լինի ոմն Պակարոս անուն (Խոր., 133) և՝ ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից (Կորիւն, 72):

Տրական հոլովաձևով արտահայտված բնության խնդիրը պահանջվում է՝ մի դեպքում հարադրավոր բայերի հարադրի կողմից, մյուս դեպքում հարադրավոր բարդության բայական բաղադրիչի կողմից, իսկ երրորդ դեպքում՝ ողջ բարդության կողմից:

2. Բացառական հոլովով[4], որ պահանջում են ազատամիտ լինիմ, անբաժան լինիմ, թափուր լինիմ//մնալ, թերաթափ լինիմ, հրաժեշտ լինիմ//առնուլ, ձեռնթափ լինիմ, ի փախուստ դառնալ, փախստական լինիմ և այլ բայեր: Օրինակ՝ Ի բաց կացցեն Յայնպիսի վրիպական օրինաց (Եղիշէ, 48):

Բազմաթիվ կառույցներում բացառականով բնության խնդիրը չի հիշատակվում, այլ ենթադրվում է բովանդակության պլանում, ինչպես՝ Զիարդ համահարք եւ միոյ մօր որդիք երկպառակք լինիցին (Եղիշէ, 170):

---

[3] Ի դեպ, ահ արկանել, զամօթ զգենուլ, անդորր առնել ե. այլ բայեր բովանդակության պլանում չեզոք սեռի պատճառական բայեր են և նշանակում են, համապատասխանաբար, «վախեցնել», «ամաչեցնել», «խաղաղեցնել»:

[4] Բացառականի քերականական իմաստները գրաբարում արտահայտվում են նաև կապական կապակցությամբ, ինչպես՝ Նոյս ետ յերեսաց առն Իսրայելի ընդ ճանապարհ անապատին (Դատ., Ի, 42): Ի փախուստ դառնայր յերեսաց զորավարին Մանուէլի (Բուզ., 204): Մի շարք դեպքերում էլ բացառականով արտահայտված բնության խնդրին փոխարինում է բացառականով արտահայտված պարագան, ինչպես՝ Ոչ աւուրբ միով յառաջ ժամանեցին խոյս տալ ի քաղաքէն (Փարպ., 145): Անդէն դևքն չիք յաչաց լինին (ՆՀԲ) և այլն:

Բացառականով արտահայտված որոշ խնդրառու բայեր ունեն դարձվածքային արժեք, ինչպես՝ Դարձի՛ք ընդ կրուկն ի նմանէ (Բ Թագ., ԺԱ, 15):

Ուղիղ իմաստից բացի՝ մի շարք բայեր կիրառվում են փոխաբերական իմաստով, ինչպես՝ Ի բաց դառնայր ի խրատուէ (Խոր., 68): Բացառականով բնության խնդիրը շարադասությամբ սովորաբար կա՛մ նախադաս դիրք է գրավում, կա՛մ վերջադաս, սակայն հազվադեպ այն հանդիպում է նաև միջադաս կիրառությամբ: Հմմտ. Թափուր ի հոգւոյն մնացեալս ... (Խոր., 363): Թերաթափ լինի զինին ի գլխոյն (Մանդ.) և՝ Ցանարժանից ձեռնթափ լինի (ՆՀԲ):

Խնդրառությամբ միարժույթ մի խումբ չեզոք սեռի հարադրավոր բայեր կարող են պահանջել ոչ թե այս կամ այն հոլովաձևով, այլ երկրորդական նախադասությամբ արտահայտված բնության խնդիր, ինչպես՝ Քանզի հասեալ էր ի վերայ, եթէ յիրաւի դատապարտեցաւ այրն (Եղիշէ, 135):

3. Կապական կապակցություններով ձևավորված հետևյալ մասնակաղապարներով

ա) «ԸՆԴ – տրական հոլովով կապվող բառաձև», որպիսին պահանջում են ընդելակից լինիմ, համակամ լինիմ, ճակատ տալ, զճակատ մղել, յուխտ մտանել և այլ հարադրավոր բայեր: Օրինակ՝ Դաշինս կռէր ընդ նմա (Ագաթ., 462): Եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան (Եղիշէ, 73):

բ) «ԸՆԴ – հայցական հոլովով կապվող բառաձև», որպիսին պահանջում են աղ առնուլ («հաց կտրել»), աղ եւ հաց ուտել, իմաստասիրակից լինիմ, խառնուրդ լինիմ, խորհուրդ դնել, մարտակից լինիմ և այլ հարադրավոր բայեր[5]: Օրինակ՝ Մի՛ բանակռիւ լինել ընդ միմեանս (Բ Տիմ., Բ, 14, Վրք.): Եղեն խառնուրդք երկոցունց զնդացն ընդ միմեանս (Բուզ., 201) և այլն:

Նկատելի է, որ ընդ նախդրի հետ կապակցվող բառաձևի գործառույթ կարող են կատարել հիմնականում եզակի տրական և հոգնակի հայցական հոլովաձևերը:

գ) «Ի(յ) –(+) եզակի թվի տրականով կապվող բառաձև», որպիսին պահանջում են զակն պահել, խամ գոռանիմ, քաջալերը լինիմ և այլ բայեր: Օրինակ՝ Զի ի նմա պահելով զակն .... (Խոր., 257) և այլն:

Հարկ է նշել, որ Ի(յ) նախդրի հետ կապվող բառաձևի գործառույթով հանդես եկող եզակի թվի տրական հոլովաձևը գլխավորում ավելի հաճախ արտահայտում է պարագայական, քան թե խնդրային քերականական հարաբերություն:

դ) «Ի(յ) –(+) հայցական հոլովով կապվող բայաձև», որպիսին պահանջում են ընդ ակամբ հայիմ, ակնարկի առնել, այրընտիր լինիմ, գուն դնել, վստահ լինիմ, քաջայոյս լինիմ և այլն: Օրինակ՝ Ընդ ակամբ հայէր ի նա (Խոր., 306): Ակնարկի առնէին յիս (Սաղմ., ԼԴ, 19) և այլն:

Նկատենք, որ այս դեպքում եզակի թվի հայցականով արտահայտված կապվող բառաձևերը հիմնականում անձնանիշ դոյականներ և դերանուններ են:

ե) «Զ + բացառական հոլովով կապվող բառաձև», որպիսին հիմնականում պահանջում են ասացական, «զգացական և հոգեկան վիճակ արտահայտող»[6] հարադրավոր մի շարք բայեր, ինչպես՝ բանիւ անցանել, դատաստան տալ, դժգոհ լինիմ, դիտակ լինիմ, խօսս արկանել և այլն: Օրինակ՝ Հրամայիցի՞ս

---

[5] Նշված մի շարք հարադրավոր բայեր պահանջում են փոխադարձ գործողությամբ իրար հետ կապված առարկաներ, և պատահական չէ, որ դրանք արտահայտվում են փոխադարձ դերանունների մինչոցով:

[6] Տե՛ս Ա.Գ.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 239:

զՏեառնէ անկարգս ինչ առնել (Յովբ, ԼԴ, 12): Տալ դատաստան զանձանց (Փարպ., 34):

գ) «ԱՌ – տրական հոլովով կապվող բառաձևեր», որպիսին պահանջում են վճիռ մատուցանել, մօտ կալ և այլ հարադրավոր բայեր, ինչպես՝ Այլ յամեմ ես առ ձեզ մօտ կալով (Եղիշէ, 186) և այլն:

է) «ԱՌ – հայցական հոլովով կապվող բառաձևեր», որպիսին պահանջող հարադրավոր բայերից են ոխակալ լինիմ, ձայն արձակել, յաջսիթերս երթալ, ողջոյն լինիմ, օրէնս դնել, պարապ բերել և այլն: Օրինակ՝ Եւ Յակոբոս գէմ եղեալ առ արքայ (Խոր., 246): Աղօթիւք խնդրուածս առնէին առ Աստուած (Եղիշէ, 81):

ը) «ՎԱՍՆ – սեռական հոլովով կապվող բառաձևեր», որպիսին պահանջում են ի կասկածանս անկանիմ, հրապարակ առնել, վրճռումն դնել, նախանձ առնուլ, փոյթ դնել, քէն պահել, քննութիւն առնել և այլ հարադրավոր բայեր: Օրինակ՝ Զայս արար Մաժան՝ քէն պահելով վասն Սմբատայ (Խոր., 185): Խորհուրդ առնոյր վասն ճանապարհացն (Ագաթ., 459) և այլն:

թ) «Ի ՎԵՐԱՅ – սեռական հոլովով կապվող բառաձևեր», որպիսին պահանջում են զերկիւղ ածել, կասկածահար լինիմ, ոխաթափ լինիմ, զողբս հարկանել և այլ հարադրավոր բայեր: Օրինակ՝ Ինքնին ահարկու լինի է վերայ այնոցիկ (Ագաթ., 290): Զերկիւղ ածել ի վերայ նոցա (Սիր., Դ, 19) և այլն:

Գրաբարի՝ խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի հարադրավոր մի խումբ բայերի հետ խնդիր լրացումները հանդես են գալիս կապակցման տարբեր եղանակներով ու միջոցներով:

Որոշ հարադրավոր բայերի հետ գրաբար լեզվի զարգացման համաժամանակյա կտրվածքում կապակցվող խնդիրն արտահայտվում է, մի դեպքում տրական հոլովով, մյուս դեպքում կապական կապակցությամբ: Այդ բայերից են այց առնել[7], այցելութիւն առնել[8], աշխար դնել, ի սպասու կալ, փոյթ առնել, փոյթ ունիմ, քինախնդիր լինիմ և այլն: Հմմտ՝ Հաշուէին զնոսա լինել անդէտս հրամանի թագաւորին (Փարպ., 94) և՝ Մի՛ անգէտ լինիր ի փոքունս (Սիր., Ե, 18): Աշխարանս դնել մեռելոյն[9] (Բուզ., 193) և՝ Աշխար դնել շուրջ դագաղներով դիականքն (Բուզ., 102):

Մի շարք բայերի պահանջած ընդությյան խնդիրը կարող է արտահայտված լինել որևէ հոլովաձևով (ընդ որում տրական կամ բացառական) կամ նախդրավոր կապակցությամբ: Այդ բայերից են՝ ապաստան լինիմ, ժուժկալ լինիմ, լուռ լինիմ, հակառակ կալ, վրէժ հատուցանել և այլն: Օրինակ՝ Նմա լուռ ոչ լինի Կոստանդիանոս (Խոր., 237): Լուռ լինէր թագաւորն Պարսից է թշնամութենէ (Բուզ., 115):

Առանձին բայերի հետ կապակցված ընդության խնդիրը կարող է արտահայտված լինել կա՛մ բացառական հոլովով, կա՛մ կապական կապակցությամբ: Այդ բայերից են՝ աներկիւղ լինիմ, ապաստան լինիմ, արտաքս

[7] Հարկ է նշել, որ կապակցման զուգաձևերի մի մասը գրաբարի զարգացման տարժամանակյա կտրվածքի վկայություններ են, ինչպես՝ Ցերկրայս լինիմ պատգամաց (ՆՀԲ) և՝ վասն այսոցիկ (Սահմ.): Ական տալ բանտարգելոց (Եղիշէ) և՝ ի խաչն (ՆՀԲ): Գիրկս արկանել զքեւ (Առակ., Դ, 8) և՝ զթօց (ՆՀԲ) և այլն:

[8] Թէ՛ այց առնել, թէ՛ այցելութիւն առնել բայերի նախդրավոր խնդիրները կիրառված են թարգմանական գրականության մեջ՝ Այց արարից ի վերայ նոցա (Երեմ., ԺԱ, 22): Արարից այցելութիւն ի վերայ ձեր (Երեմ., ԻԱ, 14):

[9] Հմմտ. Զաշխար եւ զկոծ դնել մեռելոց (Բուզ., 216):

ելանել, զանց առնել, թիկունս դարձուցանել[10], ժոյժ ունիմ, շնորհաւ զտանել, պատկառ կալ և այլն[11]: Հմմտ.՝ Դարձուցին յիս թիկունս (Ագաթ., 172), որք թիկունս դարձուցին առ Տէր (Բուզ., 36) և՝ Իշխեցին ի բուն յիւրեանց Տեառնէն թիկունս դարձուցանել (Ագաթ., 317):

Կան հարադրավոր բայեր (յանհաւատս լինիմ, կոխան լինիմ, գերիվերոյ լինիմ, երես(ս) առնել, ժոյժ ունիմ, հեռի լինիմ, պարապ առնուլ, պարապումն առնուլ և այլն), որոնք պահանջում են կա՛մ տրական, կա՛մ բացառական հոլովաձևով արտահայտված բնության խնդիր, թեև այդ հոլովաձևերը քերականական հականիշների արտահայտության միջոցներ են[12]: Օրինակ՝ Պարապ առեալ Շապհոյ ի պատերազմացն (Խոր., 285)[13] և՝ Պարապ առեալ խորհրդոց Շապհոյ՝ նիւթէ չարիս (Խոր., 112):

Մի շարք հարադրավոր բայեր կարող են պահպանել միջնոդական կառավարման եղանակով կապակցվող, սակայն արտահայտության տարբեր պլաններ ունեցող խնդիր-լրացումներ: Այդ բայերից են՝ ակնկառոյց լինիմ, աշխատ լինիմ, աչս արձակել, զութ արկանել, հուպ երթալ, վիճակ արկանել, վճիռ հատանել, ի վնէր գալ և այլն[14]: Օրինակ՝ Կաթոգի լինիմ զզօրավարէն (Բուզ., 132), զկնի իմ (Բ Թագ., ԺԵ, 30) և՝ ի սէր քո (Երզ., Ե, 8): Վասն կենդանի յուսոյն զուն գործեալ (Եզնիկ, 240) և՝ Ի վերայ դրանն զուն գործեցին (Բ Մակ., ԺԲ, 11) և այլն:

Կապակցն կապակցությամբ արտահայտված բնության խնդիրների՝ միմյանց հետ համանշային կամ հոմանշային դաշտեր կազմելու գործընթացի մեջ կարևոր դերը ոչ թե կապվող բառաձևերինն է, այլ կապերինը: Հենց միմյանց հետ համանշություն կամ հոմանշություն կազմող կապերի անմիջական մասնակցությամբ են ձևավորվում համանիշ կամ հոմանիշ բնության խնդիրներ:

Այսպես, իմաստային պլանում համանիշ բնության խնդիրներ են

---

[10] Թիկունս դարձուցանել-ը կարող է պահանջել և՛ շնչավոր (անձ կամ կենդանի), և՛ թանձրացական առաբկա անվանող բնության խնդիր: Հմմտ. Եւ ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց (Խոր., 270): Եւ ոչ թիկունս դարձուցանէ յանասնոց (Առակ., Լ, 30) և՝ Մի յահագին բրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուցուք (Եղիշէ, 101), որտեղ վերջին կիրառության մեջ առկա է վոխաբերական իմաստ:

Ի դեպ, «Եւ ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց» կառույցը լավագույնս վկայում է, որ ոչ մի ժխտական դերանունն առաջացել է բայի ժխտական խոնարհման ցուցչի՝ ոչ-ի՝ բայի դրական ձևից ստորանջատված լինելու հետևանքով: Շարադասական այդ ազատությունը հետագայում պատճառ է դարձել, որ այն դիտվի որպես ոչ մի դերանվան բաղադրիչը: Այս բանին նպաստել է ոչ-ի չեշտակորույս լինելը, որի հետևանքով էլ այն արևելահայերենում այլևս չի կարողացել խաղալ նաև գործողություն ժխտողի իր դերը այն զիջելով նոր ժխտականին՝ չ ձևույթին:

[11] Գահ լինիմ հարադրավոր բայը պահանջում է ոչ միայն բացառական հոլովով կամ կապական կապակցությամբ, այլ նաև գործիական հոլովաձևով արտահայտված խնդիր լրացում: Հմմտ. Գահ լինիմ նոցա (ՆՀԲ), ի մէնջ (Փարպ., 178) և՝ զգմանէ (Եղիշէ, 182):

[12] Անշուշտ, ոչ բոլոր հարադրավոր բայերի պահանջած տրական և բացառական հոլովաձևերով արտահայտված լրացումներն են բնության խնդիրներ, ինչպես՝ Ի տախտակացն խարտակելոց յայտնի եղեալ տեսանէր բերելոյն Թախծութիւնս (Կորիւն, 52) և՝ Ցայտնի լինէր զօրավարքն (Փարպ., 127):

[13] Որոշ բայերի՝ տարբեր հոլովաձևերով բնության խնդիրները գրաբարի զարգացման տարժամանակյա կտրվածքի լեզվական վկայություններն են: Օրինակ՝ Փիլիսոփայութեան չէր ինչ հեռի (ՆՀԲ) և՝ Հեռի լինիմ ի քէն (ՆՀԲ):

[14] Նշված հարադրավոր բայերից մի քանիսը խոսքի մեջ հանգես են բերում դարձվածքային արժեք, ինչպես՝ զահ (և զերկիւղ) տալ, ակնակառոյց լինիմ, աչս արձակել և այլն: Օրինակ՝ Արձակեաց զաչս իւր զհետ հոմանեաց (Առակ., ԺԷ, 20): Մի՛ ինչ աչս արձակէք զուք յուսար (Ա Մակ., Դ, 17): Զի եւ զահ իւր յերկիրն (Եղեկ., ԼԲ, 32): Ցարէ յայսմանէ սկսի՛ր տալ զահ քո առաջի ամենայն ազգաց (Բ Օրէն., Բ, 25) և այլն:

ձևավորում ԱՌ//Ի, Ի ՎԵՐԱՑ//ԱՌ, ԸՆԳ//ԱՌ, ՁԿՆԻ//ՁՀԵՏ, Ձ// ՎԱՄՆ, ՎԱՄՆ//Ի ՎԵՐԱՑ, ՑԱՂԱԳՍ//Ի ՎԵՐԱՑ և այլ կապական զույգեր: Հմմտ. Իրազեկ լինիմ զքէն (Գործ., ԻԱ, 24) և՝ Իրազեկ լինիմ վասն քո (Գործ., ԻԱ, 21): Վասն խաչանց իմոց զնեմ զանձն իմ (Ագաթ., 238) և՝ Ի վերայ խաչանց քոց եղեր զանձն քո (Ագաթ., 55) և այլն:

Մի շարք նախդիրների մասնակցությամբ ձևավորվում են հոմանիշ բնության խնդիրներ, ինչպես՝ Ի//ՁԿՆԻ, ԱՌ//ՎԱՄՆ, ՑԱՂԱԳՍ//Ի, ՁՀԵՏ//Ի և այլն: Հմմտ. Արկանէր զութ առաջի ուրացելոյն Վասակայ (Եղիշէ, 126) և՝ Արկից զձեօք զութ (Երեմ., խԲ, 19): Ձկնի նաւավարացն և փախստէիցն նետաձիգ լինէր (Փարպ., 66) և՝ Նետիւք[15] իւրովք նետաձիգ լիցի ի թշնամիս (Թիւ., Ի, 8):

Խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերը գրաբարում աչքի չեն ընկնում մեծ թվով: Դրանք, որպես կանոն, պահանջում են առնվազն երկու խնդիրներ, որոնք երկուսն էլ անվանում են գործողությունն անուղղակիորեն կրող առարկաներ՝ բնության խնդիրներ: Սա ինքնին նշանակում է, որ տեսականորեն խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի լրացում կարող են դառնալ բոլոր խնդիրները՝ բացի ուղիղ և ներգործող անուղղակի խնդիրներից:

Երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերը խնդրառության տեսանկյունից միատարր չեն:

Առանձին խումբ են կազմում այն հարադրավոր բայերը, որոնց պահանջած բնության խնդիրներից մեկն արտահայտվում է որևէ հոլովաձևով, մյուսը՝ կապական կապակցությամբ: Այդ հարադրավոր բայերից են՝ աւետիս տալ, աւետիս առնուլ, արժանի լինիմ, գոյժ տալ, գուշակ լինիմ, դատ դնել, պատասխանի առնել, վրէժ խնդրել, հրաման առնուլ և այլն:

Հարկ է նկատել, որ նշված բայերի շարքում մեծ թիվ են կազմում այնպիսիք, որոնց հետ հանդես են գալիս տրական հոլովաձևով և կապական կապակցությամբ արտահայտված բնության խնդիրներ[16]: Դրանք հիմնականում, այսպես կոչված, ասացական բայեր են, ինչպես՝ Դատ դնէր նմա վասն մահուն իւրոց (Եզնիկ, 248)[17]: Այլ այժմ իմ է երդումն տուեալ քեզ յանմահ դիսն (Եղիշէ, 158)[18] և այլն:

Տրականով արտահայտված բնության խնդրի փոխարեն որոշ բայեր զուգահեռաբար պահանջում են կապական կապակցությամբ արտահայտված

---

[15] Ձևական միջոցի խնդիր է:

[16] Անշուշտ, խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայեր չեն դիտվում այնպիսիք, որոնց պահանջած երկու բնության խնդիրներից մեկը անմիջականորեն չի բիտում տվյալ բարդության բովանդակության պլանից և կրում է պատահական բնույթ (ոչ պարտադիր կառավարում է)՝ պայմանավորված տվյալ խոսքային իրադրությամբ: Օրինակ՝ Չի մի ընդ քո այլ ումեք երկիր պաշանիցեմք (Կոչ.): Որդի ընդ հոր ի միում յաստվածութեանն խոստովանակից եղեալ (Կիւրղ.): Եւ մեզ լինել անարժ ընդ նոսա (Փարպ., 105): Ուրախ լերուք (ընդ նմա-Բուզ., 65) ի Քրիստոս (Եղիշէ, 154): Ընդ իս իւրաքանչիւր ծումբ նմա ոչ կրկնեսջիք (Եղիշէ, 45) նախադասությունների մեջ ընդգծված բնության խնդիրները արժույթի արտահայտություններ չեն, ուստի և դրանք պահանջող բայերը խնդրառությամբ միարժույթ են:

[17] Բայս հարկ եղած դեպքում կարող է տրական հոլովով արտահայտված խնդրի փոխարեն պահանջել կապական կապակցությամբ բնության խնդիր, ինչպես՝ Դատ դնեմ ընդ հարս ձեր (Եզեկ., Ի, 36): Դատ դնել անդ ընդ ձեզ (Եզեկ., Ի, 35) և այլն:

[18] Կապական կապակցության փոխարեն՝ խնդրառական 2-րդ արժույթը կարող է արտահայտվել անորոշ դերբայով, ինչպես՝ Տայր երդումն արքայն Պարսից արքային Արշակայ երդնուլ յԱւետարանաւն (Բուզ., 107):

խնդիր[19]: Հմմտ. Ապա լու եղև նմա (Ա Մակ., Զ, 1), լուր լիցի յամենայն հեթանոսս (Նէեմ., Զ, 6), լու եղև առ դատաւորն (Մատթ., ԻԸ, 14) և այլն:

Որոշ երկարժույթ բայերի պահանջով անմիջական կառավարմամբ կապակցվող բնության խնդիրն արտահայտվում է բացառական հոլովով: Այդ բայերից են՝ զողորմութիւն առնել, վրէժ խնդրել, վրէժ հատուցանել, վրէժս պահանջել, հրաման առնուլ[20] և այլն: Օրինակ՝ Վրէժս հատուցանել ընդ մահուանն Յովհաննու Մկրտչին (Խոր., 147) ի Տեառնէ (Թիւ., ԼԱ, 3): Առ նա եկեալ վրէժս յԱրտաշրէ պահանջեսցեն (Խոր., 209) յաղագս յանցանաց (Խոր., 128): Եւ խնդրեցից զվրէժխնդրութիւն իմ փոխանակ երկուց աչաց իմոց (Նաւում, Ա, 9) յայլազգեաց աստի (Դատ., ԺԶ, 28) և այլն:

Առանձին խումբ են կազմում այն հարադրավոր բայերը , որոնց պահանջած երկու բնության խնդիրներն էլ արտահայտված են իրարից տարբեր կապական կապակցություններով: Այդ հարադրավոր բայերից են՝ աղաղակ առնել, աղաղակ բառնալ, աղաչանս դնել, աղօթս առնել, աղօթս մատուցանել, ամբաստան լինիմ, բարեխօս լինիմ, բողոք արկանել, բողոք կարդալ, բողոք հարկանել, սակ արկանել, վկայութիւն դնել և այլն[21]:

Այս շարքի հարադրավոր բայերի պահանջած երկու բնության խնդիրներն էլ կապակցվում են միջնորդական կառավարման եղանակով՝ արտահայտված այնպիսի մասնակաղապարներով, ինչպիսիք են՝ «ԱՌ – հայցական հոլովով կապվող բառաձև», «ՎԱՄՆ –սեռական հոլովով կապվող բառաձև», «Ի ՎԵՐԱՑ – սեռական հոլովով կապվող բառաձև», «Ի(յ) –(+) հայցական հոլովով կապվող բառաձև», «Զ + բացառական հոլովով կապվող բառաձև», «ԸՆԴ –սեռական հոլովով կապվող բառաձև», «ՓՈԽԱՆԱԿ – սեռական հոլովով կապվող բառաձև», «ԸՆԴ – հայցական հոլովով կապվող բառաձև» և այլն, որոնք միմյանց հետ կազմում են քերականական հոմանշության կամ համանշության դաշտեր: Օրինակ՝ Հռչակ հարկանել զմէնջ ի Քրիստոս[22] (Մարկ., Ա, 45): Ոչ դահեկանի միոջ սակարկէր ընդ իս (Մատթ., Ի, 13) և այլն:

Խնդրառությամբ երկարժույթ հարադրավոր բայերի շարքում առանձնանում են նաև այնպիսիք, որոնց պահանջած երկու բնության խնդիրներն արտահայտվում են իրարից տարբեր հոլովաձևերով: Այդ բայերից են՝ արժանի լինիմ, դատ առնել, դարձ լինիմ, դաւ լինիմ, դուլ տալ, թեթեւ լինիմ, թողութիւն առնել, թօշակատար լինիմ, իրաւունս առնել, պատկառ կալ և այլն:

Զեղոք սեռի հարադրավոր բայերի պարադաառությունը[23]: Զեղոք սեռի հարադրավոր բարդությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրաբա-

---

[19] Այնպես որ նմանատիպ բայերը կարող են դասվել նաև այն բայերի շարքը, որոնց պահանջած երկու բնության խնդիրներն էլ արտահայտված են կապական կապակցություններով:

[20] Բայիս խնդրառական երկրորդ արժույթը, կապական կապակցության փոխարեն, երբեմն արտահայտվում է անորոշ դերբայով՝ Ի Տեառնէ առին հրաման սիրել զմիմեանս (Աղաթ., 342):

[21] Թեև դրաբարի գրավոր աղբյուրներում բացակայում են համապատասխան լեզվական փաստերը , այնուամենայնիվ, նշված շարքում պայմանականորեն տեղ է տրվել նաև մի շարք այնպիսի բայերի, որոնց բառիմաստից դժվար չէ ենթադրել, որ դրանք խնդրառությամբ երկարժույթ են:

[22] Հմմտ. Եւ այս հռչակ հարկանէր զնոցանէ (Բուզ., 88) ընդ երկիր ամենայն, որտեղ ընգծված պարագան բնության խնդիրներից մեկի (ի Քրիստոս) իմաստային փոփոխակն է:

[23] Անշուշտ, ոչ բոլոր բայերին է հատուկ տեղի պարագաառությունը: Գրաբարում կան բազմաթիվ բայեր, որոնք հնարավորություն չունեն պահանջելու տեղի պարագա: Դրանք այն բայերն են, որոնց հարադիրը ժամանակին գործածվել է անկախ՝ կատարելով տեղի պարագայի շարահյուսական գործառույթ (օրինակ՝ ի մէջ գալ, ի մէջ կալ, ի մէջ մատչիմ, ի մէջ մտանել, յերկիր կործանիմ, յերկիր անկանիմ և այլն), ինչպես նաև այն բայերը, որոնց հարադրի բաղադրիչներից մեկն անվանվում է մյուս բաղադրիչով՝ բայարմատով անվանվող

րում պարագաառական արժույթով ավելի հաճախ բնութագրվում են խնդրառությամբ արժութագուրկ բայերը: Նշված փաստը պատահական երևույթ չէ. բանն այն է, որ խնդրառությամբ արժութագուրկ բայերի մի մասի համար բայական բաղադրիչի՝ հարադրյալի գործառույթ են կատարում ընթացք, շարժում անվանող համադրական բայերը, որոնցից են՝ մտանել, ելանել, գալ, գնալ, խաղալ, երթալ, դառնալ և այլն, իսկ մի մասի համար էլ հոլովդրի միջոցով է անվանվում ընթացք, շարժում, ինչպես՝ ի փախուստ, հրեշտակագնաց, դեսպանագնաց, գահավէժ, երթեւեկ և այլն: Ինքնին հասկանալի է, որ նմանատիպ բաղադրիչներով հարադրված բայերի գործողության ավարտի համար խոսքային իրադրության մեջ կարևորվում է նաև այդ գործողության կատարման տեղի քերականական իմաստի արտահայտությունը:

Լեզվական փաստերը վկայում են, որ ո՛չ չեզոք սեռի պարագաառու հարադրավոր բայերն են հանդես բերում իմաստային միատարրություն, ո՛չ էլ վերջիններիս պահանջած տեղի պարագաները:

Որոշ հարադրավոր բայեր, այսպես կոչված, բուն տեղի պարագաառու են, ինչպես բանակ հարկանիմ, գետնատարած լինիմ, դարան մտանել, դարանամուտ լինիմ, երթեւեկս առնել, երեկօթս առնուլ և այլն: Բերված բայերի պահանջած բուն տեղի պարագաները կարող են արտահայտվել

«Ի + եզակի թվի տրականով (կամ հոգնակի հայցականով) արտահայտված կապվող բառաձեւ» կապական կապակցությամբ, որն, ինչպես հայտնի է, բուն տեղի պարագայական իմաստի արտահայտման հիմնական միջոցն է: Օրինակ՝ Հալածիչք մեր յանապատի ի դարան մտեալ պաշարեցին զմեզ (Ողբ., Դ, 19): Տապաստ անկցին ի հրապարակս քաղաքին իւրեանց (Ցուդ., Է, 9) և այլն:

Այլ կապական կապակցություններով, որոնք գրաբարի լեզվական աղբյուրներում ունեն բացառիկ կիրառություններ, ինչպես՝ Անկեալ կայր առաջի դահոյից (Եսթ., ԺԲ, 8): Ի վերայ երկրի գետնատարածք լինէին (Փարպ., 110) և այլն:

Բուն տեղի պարագա պահանջող չեզոք սեռի հարադրավոր բայերի մեջ կան այնպիսի բարդություններ, որոնց պահանջած կամ ենթադրած տեղի պարագան միշտ չէ, որ բառային արտահայտություն ունի: Դրանցից են՝ բանակ հարկանիմ, երեկօթս առնուլ, զտեղի առնուլ, նաւաբեկ լինիմ և այլ բայեր: Օրինակ՝ Սա ի թաքստեան լեալ (Յոր., 14): Ճակատ յարդարէր (Բ Մակ., ԺԵ, 20) և այլն:

Չեզոք սեռի հարադրավոր բայերի մի խումբ պահանջում է, այսպես կոչված, պարառական տեղի պարագա: Իբրև պարագաառու բայեր՝ դրանք միարժույթ են և առանձնանում են իրենց սահմանափակ թվով, որ նշան է, թե ոչ բոլոր հարադրավոր բայերին է հատուկ պահանջել պարառական տեղի

գործողության կատարման տեղը, ինչպես՝ ծովընկէցիկ լինիմ, քաղաքաբնակ լինիմ, դաշտամուխ լինիմ և այլն: Օրինակ՝ Ցերկիր կործանեցաւ (Բուզ., 37): Կարծիք ի մէջ մտանէին, թէ ... (Եղնիկ, 56): Իսկ նա, ի մէջ մատուցեալ, խօսել սկսաւ (Բուզ., 68): Անդ ի մէջ եկաց, սկսաւ ստել սակաւ (Բուզ., 59): Որ ի մէջ գալ ոչ կարեն (Ագաթ., 261): Քաղաքաբնակ լինիմ (Գիտ.): Ընդ առաւօտն կանխեալ լինէին դաշտամուխ (Ա Մակ., ԺԶ, 5): Կիսամեռք յերկիր անկեալ գնէին (Եղիշէ, 186) և այլն:

պարագա[24]: Այդ բայերից են՝ բակ առնուլ, բակ ունիմ, շուրջ դալ, շուրջ կալ, շուրջ պատել, շրջան առնուլ, պատ առնուլ, ցանկ ածել և այլն:

Պարառական տեղի պարագաներն արտահայտվում են «Զ նախդիր + գործիական հոլովով արտահայտվող կապվող բառաձև» մասնակաղապարով, որին երբեմն հարադրվում է շուրջ կապը՝ մի տեսակ թարմացնելով Զ նախդրով ձևավորված, բայց հենց V դարում մթագնվող պարառական իմաստը: Զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ (Խոր., 165): Շուրջ զնովաւ ցանկ ածել (Մատթ., ԺԲ, 1) և այլն:

Ուղղության տեղի պարագա են պահանջում ասպատակ առնել, ասպատակ տալ, ասպատակ դնել, ասպատակ սփռել, արշաւանս դնել, բանագնաց լինիմ, գերի երթալ, ի փախուստ կալ և այլ բայեր: Օրինակ՝ Սկսանէր ասպատակ դնել ի կողմանս Պարսից (Ագաթ., 16): Երթիջի՛ր գերի ի Բաբելոն (Երեմ., Ի, 6):

Ուղղության տեղի պարագան դրաբարում արտահայտվում է նաև «ԱՌ նախդիր–հայցական հոլովով կապակցվող բառաձև» մասնակաղապարով, որ պահանջում են ընթացք, գնացք անվանող մի շարք բայեր, ինչպիսիք են՝ դեսպանագնաց լինիմ, թափ մտանել, հրեշտակագնաց լինիմ, յափսիթերս երթալ, յափսիթերս խաղալ, փախստական դառնալ, փախստական լինիմ և այլ բայեր: Օրինակ՝ Սա դեսպանագնաց լեալ էր առ Վարազշապուհ (Բուզ., 141): Թափ մտին բոլորեքեան առ իշխանն Միւնեաց Վասակ (Փարպ., 61) և այլն:

Կան բայեր, որոնք տարբեր կիրառության մեջ պահանջում են տարբեր տեղի պարագաներ՝ մի դեպքում ելման, մյուս դեպքում վերջնակետի կամ անցման և այլն[25]: Այդ բայերից են՝ արտաքս հոսել, ի բաց իջանել, նաւագնաց լինիմ, չու առնել, փախստական լինիմ, գերեղարձ լինիմ և այլն: Օրինակ՝ Զու արարեալ յԱյրարատեան գաւառէն (Բուզ., 426): Զու արարեալ ամենայն բազմութիւնն Հայոց ի տեղիս[26] հովոց (Փարպ., 60) և այլն:

Զեզոք պետի հարադրավոր մի շարք բայեր պարագաառության տեսանկյունից եռարժույթ են: Դրանք կարող են միաժամանակ պահանջել երեք տեղի պարագաներ, որոնք արտահայտում են քերականական տարբեր իմաստներ՝ ելման կամ սկզբնակետի տեղի պարագա, վերջնակետի տեղի պարագա և այդ երկուսն իրար կապող օղակը՝ անցման տեղի պարագա: Անշուշտ, պետք է նշել, որ դրաբարում (և ոչ միայն դրաբարում) ընդունված չէ միևնույն նախադասության մեջ ելման, անցման և վերջնակետի տեղի պարագաների միաժամանակ գործածությունը: Այս կամ այն նախադասության մեջ այդ պարագաները գործածվում են ըստ անհրաժեշտության: Դրանով կարելի է բացատրել, որ՝

1. պարագաառությամբ եռարժույթ մի շարք բայեր պահանջում են միայն ելման կամ սկզբնակետի տեղի պարագա: Այդ բայերից են՝ արշաւանս առնել, արտասահման լինիմ, ի բաց ելանել, գերի գնալ և այլն: Օրինակ՝ Ցաղագս արշաւանս առնելոյ ի Պաղեստինէ (Խոր., 94): Ցաշխարհէն ի բաց կամէր գնալ (Եղիշէ, 199): Գնացեալ ի բաց ի տեղւոջէն (Փարպ., 101): Գահավէժ լինի ի

---

[24] Ամենաին հակառակ՝ պարառական պարագա պահանջող բայերը կարող են պահանջել այլ տեղի պարագա ևս: Օրինակ՝ Շուրջ կալով ի վերայ արծաթի սկտեղն (Փարպ., 35):

[25] Պայմանականորեն այս շարքն ենք դասում նաև թափանցիկ լինիմ բայը, որը պահանջում է անցման տեղի պարագա, ինչպես՝ Շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ յերկիր հարստի սլաքն (Խոր., 38):

[26] Զու առնել հարադրավոր բարդությունը ավելի հաճախ պահանջում է ելակետի տեղի պարագա: Վերջնակետի տեղի պարագա պահանջելիս չու առնել-ը ավելի հաճախ զուգադրվում է ընթացք անվանող այլ բայերի հետ, ինչպես՝ Զու արարեալ երթայր ի կողմանս Հայոց (Ագաթ., 21): Զու արարեալ գնաց յերկիրն Արարատայ (Խոր., 33): Զու առնել գնալ ի դուռնն (Փարպ., 75):

ծայրից բարձրաւանդակին (Բ Մնաց., Իե, 12)։ Որ էր դէրի եկեալ յԵրուսաղեմէ (Նաթ., Իթ, 6)։

2. Պարագաառութեամբ եռարժույթ որոշ բայեր գրավոր աղբյուրներում ունեն կամ ենթադրում են միայն վերջնակետի տեղի պարագա[27]։ Վերջինս այլ կերպ անվանվում է ուղղության տեղի պարագա և գլխավորապես արտահայտվում է «Ի(յ) –(+) եզակի (կամ հոգնակի) հայցական հոլովով արտահայտված բառաձեւ» կապական կապակցությամբ։

Պարագայական արժույթով են օժտված նաև խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի մի շարք բայեր։ Դրանցից մի քանիսը բացառական հոլովով բնության խնդրի փոխարեն հնարավորություն ունեն պահանջելու առնվազն մեկ տեղի պարագա. պարագաառությամբ երկարժույթ են։ Այդ բայերից են՝ խույս տալ, փախստական լինիմ, ի փախուստ դառնալ, գաղտագողօնք լինիմ և այլն։ Հատկանշական է, որ ենթադրվող տեղի պարագան միշտ չէ, որ կիրառվում է հիշյալ բնության խնդրի հետ միաժամանակ։ Օրինակ՝ Խոյս ետ ի նոցանէ զկողմամբք Կաւկասու (Խոր., 288) ընդ ճանապարհ անապատին (Դատ., Ի, 42) յանապատ տեղիս (Ղուկ., Ե, 16) և այլն։

Խնդրառությամբ միարժույթ որոշ բայեր, տրական հոլովաձևով արտահայտված բնության խնդրին զուգահեռ զորություն ունեն պահանջելու առնվազն մեկ տեղի պարագա (պարագաառությամբ երկարժույթ են)։ Այդ բայերից են՝ գերեդարձ առնել, դարդ լինիմ, մասնամուտ առնել և այլն, որոնց խնդրառության և պարագաառության արժույթները միշտ չէ, որ դրսևորվում են շարահյուսական միևնույն կառույցի մեջ։ Օրինակ՝ Թագաւորն Յունաց գերեդարձ առնէր գերութեան արքային Պարսից (Բուզ., 50) ի հայրենի երկիրն (Եղիշէ, 117) և այլն։

Միարժույթ մի շարք բայերի հարադիրների միջոցով անվանվում է գործողության կատարման ուղղություն, ինչպես՝ ընդ առաջ երթալ, ընդ առաջ լինիմ, դարձընթաց լինիմ և այլն։ Նշված տիպի հարադրավոր բարդությունները եւս տրականով բնության խնդրի հետ միաժամանակ պահանջում են գործողության կատարման տեղի պարագա կամ պարագաներ։ Օրինակ՝ Ապա Դատաբէն եթէայր ընդ առաջ զօրացն Պարսից մինչև ի լեառնն (Բուզ., 62)։ Ընդ առաջ լինել Տեառն ի վերայ օդոց (Ագաթ., 309) և այլն։

Սրանցից բացի՝ պարագաառական արժույթով բնութագրվում են նաև խնդրառությամբ միարժույթ այնպիսի հարադրավոր բայեր, որոնք տվյալ պարագան պահանջում են ոչ թե բնության խնդրին զուգահեռ, այլ բնության խնդրի փոխարեն, որն արտահայտվում է «ԱՌ – հայցական հոլովով կապվող բառաձեւ», «Ի(յ) –(+) եզակի թվի տրականով կապվող բառաձեւ», «Ի(յ) –(+) հայցական հոլովով կապվող բառաձեւ», «Հ + գործիական հոլովով կապվող բառաձեւ» և այլ մասնակաղապարներով։

Խնդրառությամբ երկարժույթ բայերը եւս կարող են հարկ եղած դեպքում պահանջել նաև պարագաներ, որոնք տվյալ բայերի համար պարտադիր չեն, ուստի և արժույթի տեսանկյունից դիտվում են անկարևոր։ Ինչպես՝ Զորոց վկայութիւն դնեմ ձեզ յաւուր յայսմիկ (Ագաթ., 362)։ Վասն նախանձու (Ամակ., Բ, 58) խնդրել զվրէժս թշնամանաց դստերն իւրոյ (Փարպ., 39) ի ձեռն քո (Ղևտ., ԺԹ, 18)։ Աղաղակ արասցեն յաւուր յայնմիկ (Ես., Ե, 30)։ Աղաղակ

---

[27] Ընթացք, գնացք անվանող այս բայերի հետ չպետք է չփոթել ի բաց գոլ, զօրաժողով առնել, յոտն կալ, ընդ ոտն կալ և նմանատիպ հարադրավոր բայերը, որոնք պահանջում են միայն ելակետի տեղի պարագա, ինչպես՝ Յոտն կացին ի բազմականաց (Եղիշէ, 115)։ Զօրաժողով արարեալ յամենայն կողմանց՝ կամէր խաղալ ի վերայ Հեփթաղին (Փարպ., 115)։

բարձ յայնկոյս ծովուն (Երեմ., ԻԲ, 20): Ի նմին լերին աղօթս առնէր (Կորիւն, 82) և այլն:

Չեղոք սեռի՝ խնդրառությամբ արժութազուրկ բայերի մի զգալի մասը դարձվածքային արժեք է ներկայացնում. հանգամանք, որ խոսում է ժողովրդախոսակցական ոլորտին հատուկ լեզվական տարրերի՝ դեռևս V դարի գրական աղբյուրներում անկաշկանդ գործածության օգտին:

Ըստ մեր հաշվարկների՝ գրաբարի բայական հարադրությունների շարքում չեզոք սեռի հարադրավոր բայերի թիվը հասնում է մոտ 1200-ի: Դրանց մի մասն աչքի է ընկնում գործառական մեծ հաճախականությամբ: Հարադրավոր մյուս բայերի հետ միասին չեզոք սեռի հարադրավոր բարդությունները գրավոր խոսքին հաղորդում են բանավոր խոսքին հատուկ պատկերավորություն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ. –Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:
Բուզ. – Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
Եզնիկ – Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
Եղիշէ – Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1957:
Խոր. – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
Կորիւն – Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1941:
ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, Ե., 1979, հ.2, Ե., 1981:
Փարպ. – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:

КЛАССИФИКАЦИЯ ДРЕВНЕАРМЯНСКИХ СОСТАВНЫХ ГЛАГОЛОВ СРЕДНЕГО ЗАЛОГА ПО ИХ ВАЛЕНТНОСТИ К ДОПОЛНЕНИЮ И ОБСТОЯТЕЛЬСТВУ

Г. К. ХАЧАТРЯН

Резюме

Исследование составных глаголов среднего залога свидетельствует о том, что они подразделяются на два типа: а) требующие дополнения; б) не требующие дополнения.

Глаголы первого типа бывают одновалентные и двувалентные. Они требуют дополнения, обусловленного не их грамматической категорией залога, а семантическими особенностями данных глаголов. По этой причине они не могут требовать ни прямого, ни косвенного дополнения воздействия.

Валентность к обстоятельству проявляется требованием обстоятельства места, что особенно присуще безвалентным к дополнению глаголам.

С точки зрения валентности к дополнению, в грабаре выделяются одновалентные, двувалентные и даже трехвалентные глаголы среднего залога.